ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով մայիս ամսին

«**Ս. Ներսէս Շնորհալի**» շքանշանով պարգեւատրուել են.
Ռապրրթ (Պապ) Սիմոնեան - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Ժոզէֆ Կանիմեան – ԱՄՆ Արեւմտեան թեմ

«**Օրհնութեան գիր**» է տրուել.
Յակոբ Քեշիշեան - Բրազիլիայի թեմ
Գեւորգ Տիմչենկօ – Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ
Թեմական պատգամաւորական ժողով – Կանադայի թեմ
Տիկնանց համագումար – Կանադայի թեմ
Հոգեւորականաց համագումար – Ֆրանսիայի թեմ
Թեմական պատգամաւորական ժողով – Ֆրանսիայի թեմ
Սուրբ Յարութիւն եկեղեցի - ԱՄՆ Արեւելեան թեմ

Լանջախաչի իրաւունք է տրուել.
Տ. Ահարոն քահանայ Մելքումեան – Սիւնեաց փոխառաջնորդութիւն
Տ. Յովհաննէս քահանայ Մարուքեան – Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ
Տ. Արշակ քահանայ Նազարեան - Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 26-ից մայիսի 2-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում էին Շվեյցարիայի հայոց թեմի երկու համայնքների՝ Նեռշաթել-Ժուրայի եւ Յյուրիխի եկեղեցական վարչությունների ատենապետներ պրն Ալեն Ուգնատը եւ պրն Վռամշապուհ Թերզյանը՝ գլխավորությամբ հոգեւոր հովիվ Տ. Շնորհք քհն. Չեքիջյանի:

Վեհափառ Հայրապետի հետ տեղի ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվեցին շվեյցարահայ համայնքների հոգեւոր, վարչակազմակերպական եւ ազգային-մշակութային կյանքին առնչվող հարցեր:

Համայնքների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին Նորին Սրբությանը ջերմ ընդունելության, հոգատար վերաբերմունքի եւ ուշադրության համար: Հայոց Հայրապետն իր օրհնությունը եւ գնահատանքը բերեց պատվիրակներին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ դրսեւորած որդիական սիրո եւ հավատարմության համար: Ի գնահատություն երկարամյա հոգեւոր ծառայության եւ վաստակի՝ Վեհափառ Հայրապետը քահանայական լանջախաչ կրելու իրավունք շնորհեց Նեռշաթել-Ժուրայի եւ Ցուրիխի հայոց համայնքների հոգեւոր հովիվ Տ. Շնորհք քհն. Չեքիջյանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՎԱՔ ԵՀԽ-Ի ԲՈՍԵԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Սույն թվականի մայիսի 3-6-ը ԵՀԽ-ի Բոսեի Էկումենիկ դպրոցում տեղի ունեցավ էկումենիկ պաշտոնյաների հավաք, որին մասնակցում էին շուրջ 60 ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից ու Եկեղեցիներից: Հավաքի ընթացքում մասնակիցները ծանոթացան ԵՀԽ-ի ընթացիկ գործունեությանը եւ առաջիկա հրամայականներին: Լսվեցին զեկույցներ 2011 թ. Ջամայկայի խաղաղասիրական հավաքի, 2013 թ. Բուսանում (Հարավային Կորեա) կայանալիք ԵՀԽ 11-րդ Ասամբլեայի մասին. իրենց գործունեությունը ներկայացրեցին ԵՀԽ-ի «Հավատք եւ Կարգ» հանձնախմբի անդամները:

Ժողովականների հետ հանդիպեց եւ իր գործունեությունը ներկայացրեց նաեւ ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար Վերապատվելի Դոկտոր Օլավ Թվեյթը, որն իր խոսքում կարեւորեց էկումենիկ պաշտոնյաների գործունեությունը, ԵՀԽ-ի եւ անդամ Եկեղեցիների միջեւ եղած կապը, իսկ համագործակցությունը սերտացնելու գործում նշեց նաեւ այն հրամայականները, որոնք ունի ԵՀԽ-ն՝ որպես էկումենիկ գլոբալ կառույց:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էր միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունից՝ միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱԼԵՊԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՀԱՄԵՐԳԸ ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԱՀՈՒՄ

Մայիսի 4-ին Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ Մայր եկեղեցու դահլիճում համերգով հանդես եկավ ՀԲԸՄ Հայ երիտասարդաց ընկերության Հալեպի «Կոմիտաս» կամերային նվագախմբը: Նվագախումբը վանաձորցի

հանդիսատեսին ներկայացրեց Վիվալդիի, Շուբերտի եւ այլ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործություններ: Երաժիշտները նաեւ հրաշալի մեկնաբանությամբ կատարեցին Կոմիտասի եւ Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները: Նվագախումբը բաղկացած էր 18-25 տարեկան հալեպահայ երիտասարդներից: Միջոցառմանը ներկա էին հոգեւորականներ, արվեստագետներ, մտավորականներ, ուսանողներ եւ աշակերտներ:

Համերգի վերջում ոգեշունչ խոսքով ելույթ ունեցավ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սեպուհ եպիսկոպոս Զուլջյանը: Նա իր շնորհակալությունը հայտնեց եւ կազմակերպիչներին, եւ նվագախմբի անդամներին հայ երգարվեստը սփյուռքում ներկայացնելու եւ հայի անունը բարձր պահելու համար:

Ի պատասխան չդադարող ծափողջույնների եւ բռավոների նվագախումբը եւս մեկ կատարում նվիրեց հանդիսատեսին:

Համերգը տեղի ունեցավ ՀՀ Ոստիկանության, Հայաստանի «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի եւ Գուգարաց թեմի առաջնորդարանի հովանավորությամբ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մայիսի 7-ին Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի գլխավորությամբ Լիոնի Սուրբ Հակոբ եկեղեցու հյուրընկալությամբ տեղի ունեցավ թեմի հոգեւորականաց դասի տարեկան համագումարը:

Համագումարը բացվեց առաջնորդ Սրբազան հոր աղոթքով: Ժողովին ներկա էր նաեւ Տ. Ադամ քահանա Մակարյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Նա ընթերցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության եւ գնահատանաց գիրը՝ ուղղված Ֆրանսիայի հայոց թեմի հոգեւորականներին:

Համագումարի ընթացքին ընթերցվեց եւ վավերացվեց Հոգեւորականաց նախորդ համագումարի արձանագրությունը եւ հաստատվեց օրակարգը, ապա առաջնորդ Սրբազանն անդրադարձավ հովվական ծառայության կոչված նոր քահանաների նշանակումներին, թեմում առկա խնդիրների հաղթահարմանն ուղղված աշխատանքներին, քննարկվեցին հոգեւորականաց ծառայության, ինչպես նաեւ ծեսի հետ կապված այժմեական հարցեր: Հոգեշնորհ Տ. Մյուռոն ծ. վրդ. Գրվրգյանը հանդես եկավ դասախոսությամբ՝ «Խոսք եւ ներշնչում» խորագրով՝ անդրադառնալով Աստվածաշնչի գրքերի հեղինակների, շարադրանքի հարցերին եւ Սուրբ Գրքի ներշնչող զորությանը:

Ընտրվեց ծիսական հարցերը համակարգող հանձնախումբ:

Ֆրանսիո հայոց թեմի հոգեւորականաց տարեկան համագումարն ավարտվեց միասնական աղոթքով:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի13-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Փրկչի Համբարձման, ինչպես նաեւ Հայոց Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին վերադարձի տոները: Հայ Եկեղեցու ծիսակարգի համաձայն Համբարձման տոնը կատարվում է Ս. Հարության տոնից քառասուն օր անց՝ հետեւողությամբ Ավետարանական այն պատումի, որ Փրկիչն իր Հրաշափառ Հարությունից հետո քառասուն օր շրջեց երկրի վրա՝ երեւալով ու մխիթարելով Իր աշակերտներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում օրվա պատարագիչն էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպս. Մաշալյանը: Անդրադառնալով օրվա խորհրդին՝ պատարագիչ Սրբազանը մեկ անգամ եւս նշեց Փրկչի համբարձման կարեւորությունը յուրաքանչյուր քրիստոնյայիս համար՝ իբրեւ առհավատչյա Քրիստոսի երկնային փառքի ու նաեւ ազգային եկեղեցական մեր միասնության Մայր Աթոռի հովանու ներքո:

Հավարտ Ս. Պատարագի հնդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց Հայրապետական մաղթանք:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Մայիսի 19-ին Դամասկոսում գործող քրիստոնեական եկեղեցիների եպիսկոպոսներն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Հայոց եղեռնի զոհերի հիշատակին: Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ: Արարողությունից հետո Մայր Աթոռում ուիտրավորաբար գտնվող բարձրաստիճան եկեղեցականները եւս աղոթք բարձրացրին Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների հոգիների հանգստության եւ խաղաղության համար:

Հոգեհանգստյան արարողությանն իրենց մասնակցությունը բերեցին նաեւ «Միասին», «Մուսալեռ» եւ «Հայ եկեղեցասիրաց» երիտասարդական կազմակերպությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 23-ին՝ Հոգեգալստյան տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն՝ ձեռամբ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի:

Նախորդ օրը՝ երեկոյան ժամերգությունից առաջ, Փրկչի Իջման Ս. Սեղանի առջեւ

ձեռնադրող Սրբազան հոր, Մայր Աթոռի միաբանության եւ հավատացյալ ժողովրդի առաջ տեղի ունեցավ ընծայացուների՝ Սամվել սարկավագ Զարգարյանի, Արամ սարկավագ Սիմոնյանի, Վիգեն սարկավագ Բաղումյանի եւ Միհրան սարկավագ Գաբրիելյանի ուղղափառ դավանության քննությունը: Ընծայման կարգի ժամանակ սարկավագները նզովեցին հին ու նոր բոլոր աղանդներն ու հերձվածները եւ ուխտեցին անմնացորդ ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Հաջորդ օրը Ս. Պատարագի ընթացքին Արմաշ եպիսկոպոսը, Սրբալույս Մյուռոնով օծելով նորընծաների ճակատներն ու աջերը, նրանց վերակոչեց Տ. Եփրեմ քահանա (Սամվել սրկ.), Տ Շավարշ քահանա (Արամ սրկ.), Տ. Ոսկան քահանա (Վիգեն սրկ.) եւ Տ. Գնել քահանա (Միհրան սրկ.)՝ ի հիշատակ Դամասկոսի Հայոց թեմում պաշտոնավարած առաջնորդների:

«Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է Հոգեգալստյան տոնը, որ նաեւ Սուրբ Եկեղեցու հիմնադրման տոնն է: Եւ այսօր Ս. Պատարագի Սրբազան եւ նվիրական այս պահին, երբ Բարձրյալն Աստված աներեւութապես ներկա է Սուրբ Հոգու խորհրդով, շնորհներով եւ մեր մեջ է աղոթքներով, ահա հրավիրում ենք Եկեղեցու անդաստանի մեջ նորաօծ մեր սիրեցյալ եղբայրներին՝ հանձինս Տ. Եփրեմ, Տ. Շավարշ, Տ. Ոսկան եւ Տ. Գնել նորաօծ քահանաների, որոնք կոչված են Ավետարանի քարոզության, կոչված են հրավիրել մարդկանց դեպի Աստված եւ նրանց սրտերում սերմանել Սուրբ Գրքի մարգարիտները», - ասաց Արմաշ Սրբազանը: Ձեռնադրող եպիսկոպոսը նաեւ պատգամեց ձեռնադրյալ քահանա հայրերին. «Սիրելիներ, փնտրեցեք Աստծուն ձեր մեջ, գտնեք Աստծուն ձեր մեջ եւ աղոթեցեք Սուրբ Հոգուն՝ բանալով ձեր սրտերը, որ Նա գա իր հրեղեն լեզուներով ներգործի, վերանորոգի, այրի եւ հրկիզի ձեր սրտերը եւ հոգին, որպեսզի ներգործեն ձեր մեջ Աստծո շնորհները եւ ձեզանից ճառագայթեն Սուրբ Հոգու առաքինությունները»:

Ձեռնադրության արարողությանը ներկա էին նաեւ ուխտավորաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գտնվող Դամասկոսի քրիստոնեական եկեղեցիների առաջնորդ եպիսկոպոսները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ԵՓՐԵՄ ՔԱՀԱՆԱ ԶԱՐԳԱՐՅԱՆ
(ավագանի անունով Սամվել)

Ծնվել է 1974 թ. մայիսի 26-ին Էջմիածին քաղաքում:

1981 թ. սովորել է Էջմիածնի թ. 2, ապա թ. 10, այնուհետեւ՝ թ. 12 միջնակարգ դպրոցներում:

1991 թ. ընդունվել է Երեւանի պետական բժշկական ինստիտուտ:

1993-1997 թթ. ուսանել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

1997-1999 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

1999 թ. հոգեւոր ծառայության է կոչվել Ս. Պետերբուրգի Ս. Կատերինե եկեղեցում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ

ประทานพระราชานุญาต

Արմավիրի թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի ձեռնադրվել է սարկավագ եւ շարունակել ծառայությունը Ս. Պետերբուրգում:

2007-2009 թթ. սովորել է Ս. Պետերբուրգի հոգեւոր ակադեմիայում:

2010 թ. հունվարի 12-ից Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ հոգեւոր ծառայության է նշանակվել Արագածոտնի թեմում;

Տ. ՇԱՎԱՐՇ ՔԱՀԱՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ
(ավագանի անունով Արամ)

Ծնվել է 1981 թ. ապրիլի 8-ին Էջմիածին քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է նախ Գրիբոյեդով գյուղի միջնակարգ դպրոցում, ապա՝ Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

1998-2003 թթ. ուսանել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի ձեռնադրվել է սարկավագ:

2006-2007 թթ. ուսումը շարունակել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2007 թ. հունիսի 25-ին Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայության պատասխանատու:

Տ. ՈՍԿԱՆ ՔԱՀԱՆԱ ԲԱՂՈՒՄՅԱՆ
(ավագանի անունով Վիգեն)

Ծնվել է 1983 թ. դեկտեմբերի 20-ին Էջմիածին քաղաքում:

1990-2001 թթ. ուսանել է Էջմիածնի Վահան Ռշտունու անվան թ. 11 միջնակարգ դպրոցում:

2001-2007 թթ. սովորել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի ձեռնադրվել է սարկավագ:

2007 թ. Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ պաշտոնի է կոչվել Քրիստոնեական դաստիրակության կենտրոնում որպես գործավար-քարտուղար:

Տ. ԳՆԵԼ ՔԱՀԱՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
(ավագանի անունով Միհրան)

Ծնվել է 1984 թ. հուլիսի 31-ին Գերմանիայում:

1990-2001 թթ. սովորել է Էջմիածնի թ. 3 միջնակարգ դպրոցում:

2002-2006 թթ. ուսանել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

2006-2008 թթ. ուսումը շարունակել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի ձեռնադրվել է սարկավագ:

2008 թ. Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ պաշտոնի է կոչվել որպես լուսարարի օգնական, ապա Ս. Գայանե վանքի սարկավագ:

2009 թ. ապրիլի 20-ին նշանակվել է Ներսիսյան պուրակին հարակից մանկական խաղահրապարակի տնօրեն:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 25-28-ը Մոսկվայում կայացավ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի հոգեւորականաց դասի տարեկան հաշվետու ժողովը՝ նախագահությամբ թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի:

Տերունական աղոթքից հետո ողջույնի խոսքով հանդես եկավ առաջնորդ Սրբազան հայրը՝ բարի գալուստ մաղթելով տարբեր երկրներից եւ քաղաքներից ժամանած քահանաներին: Ապա տեղի ունեցան հոգեւոր դասի հաշվետու ելույթները: Քահանաները մանրամասնորեն ներկայացրեցին իրենց համայնքներում արձանագրած առաջընթացները, խոսեցին նոր ծրագրերի եւ խնդիրների մասին: Ժողովի ընթացքում քննարկվեցին նաեւ հոգեւոր կյանքն աշխուժացնելու եւ զորացնելու զանազան այլ հարցեր:

Սրբազան Հայրն իր ամփոփիչ ելույթում գնահատանքի խոսք ուղղեց թեմի հոգեւորականներին եւ հորդորեց ի կատար ածել մի շարք կարեւոր առաջադրանքներ. հնարավորին չափ միօրինակացնել բոլոր ծեսերը, զարգացնել կրթադաստիարակչական ծրագրերը՝ ստեղծելով «Հայորդյաց տուն» անվանումով հայեցի դաստիարակության կենտրոններ, աշխուժացնել երիտասարդաց միությունների գործունեությունը եւ այլն:

Մայիսի 28-ին Սրբազան հոր առաջնորդությամբ հոգեւորականները եղան նորակառույց Մայր եկեղեցում, միասնական աղոթք բարձրացրեցին առ Աստված համալիրի արդեն ավարտին հասած փոքր եկեղեցում, ծանոթացան ընթացող շինարարական աշխատանքներին:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՄԱՅԻՍԻ 31-Ը՝ Ս. ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ՏՈՆ

Մայիսի 31-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Ս. Հռիփսիմյանց նահատակ կույսերի տոնը:

Տոնական այս օրը նաեւ ուխտի օրն է Ս. Հռիփսիմե վանքի, եւ ավանդաբար այդ օրը Մայր Աթոռից եկեղեցական հանդիսավոր թափորով Ս. Հռիփսիմե վանք է տարվում Ս. Հռիփսիմեի մասունքն ամփոփող Աջը:

Միաբանական հերթական հավաքի առիթով Մայր Աթոռում ժողովված իննսունհինգ

միաբաններից, թեմական առաջնորդներից կազմված հանդիսավոր թափորը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առավոտյան ուղղվեց դեպի Ս. Հռիփսիմե վանք՝ մեծ խանդավառություն առաջացնելով քաղաքի բնակչության շրջանում: Ճանապարհին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նահապակ կույսի մասունքով օրհնում էր բարեպաշտ ժողովրդին:

Ս. Հռիփսիմեի վանքում, որտեղ ժողովվել էին տարբեր համայնքներից ժամանած բազում ուխտավորներ, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Մատթեոս աբեղա Պողոսյանը:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց Անդաստանի արարողություն եւ մատաղի օրհնություն, ապա գեղարվեստական հայտագրով հանդես եկան Էջմիածնի Հայոցդյաց տան գեղարվեստական խմբակների սաները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ